ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՇԿ 1/1

ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ներքին աուդիտի կոմիտեի 2014 թվականի 12 15-ի նիստի

Նիստը նախագահում էր՝

Գ. Խաչատրյանը- ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատար

Նիստին մասնակցում էին ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի 23.09.2014թ. թիվ 171-Ա հրամանով սահմանված ներքին աուդիտի կոմիտեի անդամներ՝

Է. Պապյանը- Կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ,

Ք. Աղվանյանը- Կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ,

Մ. Կարապետյանը- Կոմիտեի աշխատակազմի փորձագետ,

Է. Մաթևոսյանը- <<Քաղաքագիտական, տնտեսագիտական, իրավագիտական հետազոտությունների և կանխատեսումների>> ՀԿ,

Կ. Սարգսյանը- Կոմիտեի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ (ներքին աուդիտի կոմիտեի քարտուղար):

Օրակարգում՝

1. ՀՀ ջրտնտպետկոմիտեի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից 2014 թվականի հուլիսի 24-ից մինչև սեպտեմբերի 3-ը <<Սևան-Հրազդանյան-ջրառ>> ՓԲԸ-ում իրականացրած համակարգի գնահատման աուդիտի արդյունքների վերաբերյալ:
   Զեկուցող՝ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ՝ Կ Սարգսյան:
   Կ. Սարգսյանը նշեց, որ ներքին աուդիտի է ենթարկվել <<Սևան-Հրազդանյան-ջրառ>> ՓԲԸ-ի 2013 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի գործունեությունը, ինչի վերաբերյալ աուդիտորական

առաջադրանքի համաձայն կազմվել է հաշվետվություն, քննարկվել <<Սևան-Հրազդանյան-ջրառ>> ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատար Ս. Հովհաննիսյանի և գլխավոր հաշվապահ Ս. Ներսիսյանի հետ և արվել են համապատասխան առաջարկություններ:

Ներքին աուդիտի կոմիտեն որոշեց.

Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատար՝ **Գ. Խաչատրյան**

Ներքին աուդիտի կոմիտեի անդամներ՝ **Է. Պապյան**

Ք. Աղվանյան

Մ. Կարապետյան

Է. Մաթևոսյան

Կ. Սարգսյան

Վերջնական հաշվետվություն

<<Սևան-Հրազդանյան-ջրառ>> ՓԲԸ-ի 2014թ. ներքին աուդիտի

Համակարգի գնահատման աուդիտ

12 ամիս ժամանակահատվածի համար

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

___._____.2014թ.

ք.Երևան

Ներածություն

Համաձայն ՀՀ Տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի՝ 2014 թվականի ներքին աուդիտի տարեկան ծրագրի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կոմից 2014 թվականի հուլիսի 24-ից մինչև 2014 թվականի սեպտեմբերի 3-ն ընկած ժամանակաշրջանում իրականացվել է «Սևան-Հրազդանյան-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության՝ (այսուհետ Ընկերություն) 2013 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համակարգի գնահատման աուդիտ:

Աուդիտն անցկացվեց նորմալ աշխատանքային պայմաններում: Աուդիտի անցկացման ընթացքում տրամադրվեցին անհրաժեշտ առկա գրանցումները, փաստաթղթերը և այլ տեղեկատվություն:

Ընկերության ներկայացում

«Սևան-Հրազդանյան-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ:

Ընկերությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 9-ի N164 որոշման համաձայն «Ողոգում-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության (գրանցման թիվ՝ 286.140.00377, գրանցման օրը՝ 27 հոկտեմբերի 1994թ, վկայական 01 Ա 003206) առանձնացման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է դրա իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին համապատասխան:

«Սևան-Հրազդանյան-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը պետական գրանցում է ստացել 17.05.2006թ. ՀՀ պետական ռեգիստրի "Կենտրոնական մարմնի" կողմից. գրանցման համարը՝ 222.120.00617, Վկայական՝ 03Ա 071487: Ընկերության կանոնադրության վերջին փոփոխությունը գրանցվել է 29.11.2013թ.-ին՝ համաձայն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի 28.08.2013թ.-ի որոշման:

Ընկերության միակ հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման լիզորված մարմինն է ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեն:

Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ա. Արմենակյան 125:

Ընկերության գործունեության նպատակն ու խնդիրները

«Սևան-Հրազդանյան-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության հիմնական նպատակը ջրային օբյեկտներից ջրառի իրականացմամբ պայմանագրային հիմունքներով ջրօգտագործողներին և ջուր սպառողներին ջրի մատակարարումն է:

Ընկերության գործունեության հիմնական խնդիրներն են՝

- ապահովել հիմնադրի կողմից ընկերության օգտագործմանը տրված ՀՀ տարածքում տեղաբաշխված հանրապետական-ռազմավարական նշանակություն ունեցող ջրի մատակարարման համակարգերի համալիր կազմի մեջ մտնող բնական ջրաղբյուրներից ջուր ամբարող (կուտակող) ջրամբարների, ջրառ իրականացնող ջրընդունող ջրատնտեսական օբյեկտների և դրանց հետ կապված ջրատնտեսական սարքերի ու սարքավորումների շահագործումն ու պահպանումը՝ գործող տեխնիկական նորմերի պահանջներին համապատասխան.

- պայմանագրային հիմունքներով ջրօգտագործողներին, ջուր սպառողներին կողմերի սպասարկման ոլորտի սահմանազատման կետերում՝ ջրտուքի դիտակետերում ջրի մատակարարումը:

- ոռոգման, ջրամատակարարման համակարգերի համալիր կազմի մեջ մտնող ջրատնտեսական օբյեկտների պահպանում և շահագործում,

- ջրի կուտակում ջրամբարներում, կուտակված ջրի բացթողում և մակերևութային ջրաղբյուրներից ջրառի իրականացում, մղում ու տեղափոխում մինչև սահմանազատման կետ, մատակարարում ջրօգտագործողներին և ջուր սպառողներին,

- ջրառի, ջրտուքի և ջրաչափական կետերի կառուցում, կահավորում, շահագործում:

Ընկերության կառուցվածքը

Համաձայն «Սևան-Հրազդանյան-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի 2013 թվականի N2 որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի՝ «Սևան-Հրազդանյան-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության 2013 թվականի հաստիքային ցուցակով Ընկերության աշխատակիցների թվաքանակը կազմում է 355 մարդ, որից 255 հիմնական աշխատողներ և 100 սեզոնային աշխատողներ: Ընկերությունում առկա բոլոր աշխատանքային պայմանագրերով և Ընկերության տնօրենի հրամաններով ամրագրված են յուրաքանչյուր աշխատակցի

աշխատանքային պարտականությունները, սակայն ստորաբաժանումների (բաժիններ, ծառայություններ) մակարդակով գործառույթները թղթային և գծապատկերներով նկարագրված և հաստատված չեն (համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 30.11.2012թ. N1050-Ն հրամանի պահանջների):

Ընկերության կառուցվածքային ստորաբաժանումներն են (31.12.2013թ. դրությամբ).

1. Ղեկավարություն,
2. Ֆինանսահաշվային բաժին,
3. Ջրամբարների շահագործման բաժին
4. Էներգետիկայի և պ/կայանների շահագործման բաժին
5. Նորոգումների և արտադրատեխնիկական բաժին
6. Ջրօգտագործման, հաշվառման և իրացման բաժին
7. Վարչական բաժին,
8. Տնտեսական ծառայություն
9. Դիսպետչերական ծառայություն
10. Ծառայություններ,
11. Կասկադի տեղամաս
12. Հրազդանի հ/տեղամաս
13. Մարմարիկի ջրամբար
14. Գեղարդալճի և Սևաբերդի ջրամբար
15. Երևանյան տեղամաս
16. Ապարան-Արագածի տեղամաս
17. Էջմիածնի տեղամաս
18. Մխչյանի տեղամաս
19. Արտաշատի ջրանցք
20. Մխչյանի արտադրական բազա
21. Ազատ քառաստիճան տեղամաս
22. Արզնի-Շամիրամ ջրանցք
23. Հարավային տեղամաս
24. Դեբետ-Աղստև տեղամաս

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(հազար դրամ)

	Ծնթ.	31.12.2013թ.	31.12.2012թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	55,233,299	35,204,623
Ոչ նյութական ակտիվներ		133,045	133,455
		55,366,344	35,338,078
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	32,187	34,029
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	995,009	540,460
Դրամական միջոցներ	7	6,611	4,605
		1,033,807	579,094
Ընդամենը ակտիվներ		56,400,151	35,917,172
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	8	12,215,190	10,161,759
Լրացուցիչ կապիտալ	8	58,812,468	38,471,132
Կուտակված վնաս		(16,299,507)	(13,380,488)
		54,728,151	35,252,403
Ոչ ընթացիկ պարտավորություն ներ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	240,742	257,223
Փոխառություններ	11	-	-
		240,742	257,223
Ընթացիկ պարտավորություն ներ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	648,900	407,546
Վարկեր և փոխառություններ	11	782,358	-
		1,431,258	407,546
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		56,400,151	35,917,172

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հազար դրամ

	Ծնթ.	2013թ.	2012թ.
Հասույթ	12	788,804	726,765
Վաճառքի ինքնարժեք	13	(3,805,678)	(3,157,553)
Համախառն վնաս		(3,016,874)	(2,430,788)
Այլ եկամուտ	14	573,326	769,513
Վարչական և իրացման ծախսեր	15	(183,188)	(209,260)
Այլ ծախսեր	16	(269,504)	(65,493)
Գործառնական գործունեությունից վնաս		(2,896,240)	(1,936,028)
Ֆինանսական ծախսեր		(27,644)	(6,086)
Այլ օգուտ/(կորուստ)		4,867	(7,358)
Վնաս մինչև հարկումը		(2,919,017)	(1,949,472)
Շահութահարկի գծով ծախս	17	-	-
Տարվա վնաս		(2,919,017)	(1,949,472)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		(2,919,017)	(1,949,472)

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հազար դրամ

	Կանոնադրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդն առ 01.01.2012թ.	10,848,159	38,471,132	(11,431,016)	37,888,275
Տարվա զուտ վնաս	-	-	(1,949,472)	(1,949,472)
Մնացորդն առ 31.12.2012թ.	10,848,159	38,471,132	(13,380,488)	35,938,803
Գործարքներ բաժնետիրոջ հետ	(686,400)			(686,400)
Տարվա զուտ վնաս	-		(2,919,017)	(2,919,017)
Մնացորդն առ 31.12.2013թ.	12,215,190	58,812,468	(16,299,507)	54,728,151

Ընկերության վերջին տարիներին կրած վնասները հիմնականում պայմանավորված են հիմնական միջոցների մաշվածության ծախսերով, մասնավորապես 2013թ.-ին 2,233,067 հազար դրամ, որի արդյունքում հաշվետու ժամանակահատվածի դրությամբ կուտակված վնասը կազմել է 16,299,507 հազար դրամ:

Ցուրաքանչյուր տարի Ընկերությունը պետական բյուջեից ստանում է դրամաշնորհ՝ Ընկերության գործունեության ֆինանսական ճեղքվածքի մարման նպատակով՝ ոռոգման համակարգի կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրման ծրագրի շրջանակներում: Հաշվետու տարում Ընկերությունը ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության

պետական կոմիտեից ստացել է 554,438 հազար դրամ դրամաշնորհ՝ համաձայն "Հայաստանի Հանրապետության 2013թ. պետական բյուջեի մասին" ՀՀ օրենքի:

Ընկերության արդյունավետ գործունեության համար սպառնալիք են հանդիսանում նաև կուտակվող դեբիտորական պարտքերը:

Ընկերության առևտրային դեբիտորական պարտքերը հիմնականում առաջանում են ջրօգտագործող ընկերություններին մատակարարվող ոռոգման ջրի իրացումից: 31.12.2013թ.-ի դրությամբ կուտակված դեբիտորական պարտքը կազմում է 518,985 հազար դրամ:

Հիմնական միջոցներ հազար դրամ

	Շենքեր, կառուցվածքներ և փոխանցվող հարմարանքներ	Մեքենա-սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ	Արտադրատն տեսական գույք	Այլ ՀՄ-ներ	Ընդամենը
Առ 1 հունվարի 2013թ.	47,336,465	805,977	51,382	710	48,194,534
Ավելացումներ	22,162,752	89,087	6	76,598	22,328,443
Նվազեցումներ	90,512	38,740	465	-	129,717
Առ 31 դեկտեմբերի 2013թ.	69,408,705	856,324	50,923	77,308	70,393,260

31.12.2013թ. դրությամբ հիմնական միջոցները ներառում են 70,393,260 հազար դրամ (31.12.2012թ.՝ 11,833,973 հազար դրամ) ընթացիկ արժեքով հիմնական միջոցներ, որոնք ստացվել են համաձայն ՀՀ Կառավարության 2006թ. փետրվարի 9-ի N 164-Ն որոշման՝ ըստ վերակազմակերպման բաժանիչ հաշվեկշռի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի 2006թ. մարտի 7-ի N 27-Ն որոշման՝ Ընկերության կանոնադրական կապիտալի համալրման նպատակով:

Հաշվետու տարում ՀՀ կառավարության 19 հուլիսի 2012թ. թիվ 906-Ա որոշմամբ 605,560 հազար դրամ ընթացիկ արժեքով ոռոգման համակարգեր Ընկերությունը հանձնել է ՀՀ Տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին, համապատասխան թվով բաժնետոմսերի հետգնման դիմաց:

Պաշարներ հազար դրամ

	31.12.2013թ.	31.12.2012թ.
Նյութեր	19,125	20,402
Վառելիք	1,812	496
Պահեստամասեր	9,354	11,711
Շինանյութ	392	10
Փոքրարժեք առարկաներ	58	25
Այլ պաշարներ	1,446	1,385
	32,187	34,029

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր հազար դրամ

	31.12.2013թ.	31.12.2012թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր	941,622	489,812
Անհավաքագրելիության գծով պահուստ	-	-
	941,622	489,812
Կանխավճարներ հարկերի գծով	10,255	-
Այլ	43,132	50,648
	995,009	540,460

Ընկերության առևտրային դեբիտորական պարտքերը հիմնականում առաջանում են ջրօգտագործող ընկերություններին մատակարարվող ոռոգման ջրի իրացումից:

Ընկերության ղեկավարությունն իրականացրել է դեբիտորական պարտքերի՝ ըստ ռիսկայնության վերլուծություն, որի արդյունքներով դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության պահուստը 31.12.2013թ.-ի դրությամբ գնահատվել է 178,305 հազար դրամ (31.12.2012թ.-ի դրությամբ՝ 10,700):

31.12.2012թ. դրությամբ պարտքերն ըստ ժամկետայնության հետևյալն են.

Մինչև 90 օր - 178,305 հազար դրամ

Անհավաքագրելիության գծով պահուստի շարժ հազար դրամ

	2013թ.	2012թ.
Մնացորդը տարվա սկզբում	10,700	-
Պահուստի աճ/(նվազում)	167,605	10,700
Մնացորդը տարվա վերջում	178,305	10,700

Դրամական միջոցներ հազար դրամ

	31.12.2013թ.	31.12.2012թ.
Բանկային հաշիվներ	2,598	4,148
Դրամարկղ	4,013	457
	6,611	4,605

Կանոնադրական կապիտալ հազար դրամ

	31.12.2013թ.	31.12.2012թ.
Կանոնադրական կապիտալ	12,215,190	10,161,759
Լրացուցիչ կապիտալ	58,812,468	38,471,132
	71,027,658	48,632,891

Կանոնադրական կապիտալի շարժ

	2013թ.			2012թ.		
	քանակ	Գին	գումար	քանակ	գին	գումար
	հատ	դրամ	հազար դրամ	հատ	դրամ	հազար դրամ
Սկզբնական մնացորդ	1,250,017	8,129.3	10,161,759	1,334,452	8,129.3	10,848,159
Փոփոխություն	252,596	8,129.3	2,053,431	84,435	8129.3	(686,400)
Վերջնական մնացորդ	1,502,613	8,129.3	12,215,190	1,250,017	8,129.3	10,161,759

Ակտիվներին վերաբերող շնորհներ

հազար դրամ

	2013թ.	2012թ.
Տարեսկզբի մնացորդ	257,223	218,188
Ստացում՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեից	8,280	53,416
Ստացում՝ ՀՄՀ–Հայաստան ՊՈԱԿ-ից	-	-
Եկամտի ճանաչում	(24,761)	(14,381)
Տարեվերջի մնացորդ	240,742	257,223

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազար դրամ

	2013թ.	2012թ.
Առևտրային պարտքեր	414,562	270,976
Աշխատավարձի գծով	26,382	9,622
Ստացված կանխավճարներ	-	-
Հարկերի գծով	29,651	126,948
Այլ	178,305	-
	648,900	407,546

Վարկեր և փոխառություններ

հազար դրամ

	2013թ.	2012թ.
Վարկեր	782,375	62,000
Փոխառություններ	-	-
	782,375	62,000

Հաշվետու տարում Ընկերությունը ստացել է հետևյալ բանկային վարկերը, որոնք ապահովված են Ընկերության հիմնական միջոցների գրավով.

Վարկատու	Արժույթ	Գումար, հազար դրամ/ համարժեք	Տարեկան տոկոսա–դրույք	Վարկի տևողու-թյուն	Մարման վերջնա-ժամկետ
Բանկ	ՀՀ դրամ	782,375	16 %	365 օր	10.06.2014թ.

Հասույթ

հազար դրամ

	2013թ.	2012թ.
Ոռոգման ջրի իրացումից	786,258	717,910

Համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 01.03.2007թ. N 61-Ա որոշման՝ Ընկերության կողմից մատակարարվող ոռոգման ջրի համար սահմանվել են հետևյալ սակագները (դրամ/մեկ մետր խորանարդ ջրի դիմաց՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը), որոնք գործում են 2007թ. ապրիլի 1-ից.

- ինքնահոս եղանակով մատակարարված -1.01
- մեխանիկական եղանակով մատակարարված – 11.52

Ընդ որում, վերը նշված որոշմամբ ընդունված սակագնի հաշվարկում մաշվածություն և շահույթ նախատեսված չեն ("Սևան-Հրազդանյան-ջրառ" ՓԲԸ-ի ոռոգման ջրի մատակարարման սակագնի հաշվարկ տող 5 և 6)

Վաճառքի ինքնարժեք

հազար դրամ

	2013թ.	2012թ.
Աշխատակիցների փոխհատուցում	404,050	339,743
Հիմնական միջոցների մաշվածություն	2,220,487	2,194,622
էլեկտրաէներգիաի ծախս	1,054,943	491,348
Վառելիք և նյութածախս	69,369	77,777
Այլ	56,829	54,063
	3,805,678	3,157,553

Այլ եկամուտ

հազար դրամ

	2013թ.	2012թ.
Սուբսիդիաներից եկամուտ	554,438	751,471
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	16,461	14,381
Պաշարների վաճառքից	-	158
Անհավաքագրելիության պահուստի հակադարձումից	-	-
Պաշարների իրացումից	-	-
Այլ	2,427	3,503
	573,326	769,513

Հաշվետու տարում Ընկերությունը ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեից ստացել է 751,471 հազար դրամ (2012թ.-ին՝ 320,500 հազար դրամ) դրամաշնորհներ՝ համաձայն "Հայաստանի Հանրապետության 2013թ. պետական բյուջեի մասին" ՀՀ օրենքի:

Վարչական և իրացման ծախսեր

հազար դրամ

	2013թ.	2012թ.
Աշխատակիցների փոխհատուցում	89,713	81,323
Մաշվածություն և ամորտիզացիա	12,580	22,217
Վառելիք և նյութածախս	11,238	11,278
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	3,027	1,537
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	2,591	3,888
ՀՄ-ի նորոգում	-	-
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	6,838	6,421
Բանկային ծառայություններ և ապահովագրություն	3,833	2,840
Չհաշվանցվող հարկեր	38,065	67,617
Այլ	15,303	12,139
	183,188	209,260

Այլ ծախսեր

հազար դրամ

	2013թ.	2012թ.
Դեբիտորական պարտքերի պահուստի աճ	167,605	10,700
Տույժեր, տուգանքներ	99,463	48,455
Այլ	2,436	6,338
	269,504	65,493

Հարկային և այլ ստուգումներ

«Սևան-Հրազդանյան-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունում 2013 թվականի ընթացքում իրականացվել են Հարկային տեսչության ստուգում՝ համաձայն N1009247 հանձնարարագրի, որի արդյունքում ՀՀ պետ. բյուջե է փոխանցվել 44043464 (քառասունչորս միլիոն քառասուներեք հազար չորս հարյուր վաթսունչորս) դրամ:

Եզրակացություն

1. Իրականացված չեն ստորաբաժանումների մակարդակով (բաժիններ, ծառայություններ) գործառույթների թղթային և գծապատկերներով նկարագրման և հաստատման գործընթացը համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 30.11.2012թ. N1050-Ն հրամանով հաստատված կարգի պահանջների:

2. Ավարտված չեն հիմնարկի օբյեկտների սեփականության վկայականների ձեռք բերման աշխատանքները:

3. Իրականացված չեն Ընկերության հաշվեկշռում հաշվառված և անհատույց օգտագործման հանձնված (ՋՕԸ-ներին) գույքի բոլոր հիմնական և շրջանառու միջոցների գույքագրման և հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման աշխատանքները:

Գործողությունների ծրագիր

Առաջարկում ենք մինչև 2015 թվականի հունիսի 31-ն իրականացնել ստորաբաժանումների մակարդակով (բաժիններ, ծառայություններ) գործառույթների թղթային և գծապատկերներով նկարագրման և հաստատման գործընթացը համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 30.11.2012թ. N1050-Ն հրամանով հաստատված կարգի պահանջների: Ավարտին հասցնել պետական հիմնարկի օբյեկտների սեփականության վկայականների ձեռք բերման աշխատանքները: Իրականացնել Ընկերության հաշվեկշռում հաշվառված և անհատույց օգտագործման հանձնված (ՋՕԸ-ներին) գույքի բոլոր հիմնական և շրջանառու միջոցների գույքագրման և հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման աշատանքները:

Կոմիտեի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ		Կ. Սարգսյան
«Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատար		Ս. Հովհաննիսյան
«Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ		Ս. Ներսիսյան